Գ. ԵԴԻԼՅԱՆ

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՈՂԵՐԻ ԴՅՈՒՐԸՆԹԵՌՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

655.2
Ե-16

ՊԵՏՀՐԱՏ • 1935

655.2
Խ-16

24 SEP 2010

Գ. ԽԴԻԼՅԱՆ

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՈՂԵՐԻ ԴՅՈՒՐԸՆԹԵՌՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

(ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐ
ՅԵՎ
ԳՐԱԳԵՏ ԲԱՆՎՈՐՆԵՐ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1935

24 SEP 2010

1933 թվին էքսպերիմենտալ մեթոդով ուսումնասիրեցինք և պարզեցինք այն հարցը, թե յոթնամյա և միջնակարգ դպրոցների աշակերտները տարբեր յերկարության տողերով տված տեքստերն ինչպես են կարդում. գտանք, վոր տարբեր դասարանների աշակերտները տարբեր յերկարության տողերով տպված տեքստերն են հաջող կարդում։ Այդ ուսումնասիրության արդյունքները լույս տեսան առանձին գրքույկով («Տողերի դյուրընթեռնելիության խնդիրը» 1933 թ.)։ Այս խնդրի պարզաբանությունը չէր կարող սպառված համարվել, վորովհետև դեռ չէին ուսումնասիրված ավելի բարձրորակ ընթերցողները—ուսանողները և ուսուցիչները, ինչպես և գրագետ բանվորները։ Պետհրատը գրքեր է հրատարակում վոչ միայն դպրոցականների, այլև բարձրագույն դպրոցների և գրագետ մասսայի համար։

Այս կատեգորիայի ընթերցողներին ևս հարկավոր էր ուսումնասիրել։ Այդ աշխատանքը կատարեցինք 1934 թվին, Պետհրատի վարչության հանձնարարությամբ։

Էքսպերիմենտալ աշխատանքի մատերիալի և մեթոդիկայի մասին այստեղ չենք խոսում, վորովհետև այդ խնդիրների մասին մանրամասն խոսված է վերոհիշյալ գրքի մեջ։ Այս դեպքում էլ օգտագործել ենք նույն մատերիալը և առաջնորդվել նույն մեթոդիկայով։



24375 :59
ZUUA-Арм.ССР
им. А. Мясникяна

Հենց այդ պատճառով էլ այստեղ խոսվելու է միմիայն փորձերի տված արդյունքների մասին։

# I

## ԲԱՆՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Մեր ուսումնասիրության ընթացքում մեզ հետաքրքրել են միմիայն այն բանվորները, վորոնք գրագետ են, հեշտությամբ կարդում են անծանոթ հոդվածներ, նոր գրքեր և լրագրեր։

Փորձի յեն յենթարկվել Յերևանի բանվորական գիշերային դպրոցների 6-րդ և 7-րդ դասարանների ուսանողներից 302 հոգի։

Փորձի տվյալները պարզեցին, վոր 32 հոգի մեկ րոպեյում կարդում են 400—500 տառ։ Մեկ րոպեյում այդքան տառ կարդացողներին չենք հաշվում լրիվ գրագետ, հենց դրա համար էլ փորձերից ստացված մատերիալն ուսումնասիրելիս այդչափ քիչ տառեր կարդացողների ընթերցման արդյունքները հաշվի չենք առել։

Հաշվի չենք առել նաև այն բանվորների ընթերցման տվյալները, վորոնք մեկ րոպեյում կարդացել են 800-ից ավելի տառ, վորովհետև նրանք վոչ թե սովորական, այլ բարձրորակ գրագետների կարգին են պատկանում։ Այդ կարգին են պատկանում փորձի յենթարկված բանվորներից 74 հոգի։

Միջին գրագիտության աստիճանի վրա գտնվող բանվորներից մեկ րոպեյում կարդացել են՝

23.950
15 APR 2013

62 հոգի 500—600 տառ
62 հոգի 600—700 տառ
72 հոգի 700—800 տառ

196 հոգի

Սրանց բաժանում ենք յերկու յենթախմբերի՝

ա) 500—700 տառ կարդացողներ և
բ) 700—800 տառ կարդացողներ

## Ա. ՅԵՆԹԱԽՄԲԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ

Այս կատեգորիայի տակ յեղող բանվորները կարդացել են մեկ րոպեյում՝

ա) 62 հոգի 500—600 տառ
բ) 62 հոգի 600—700 տառ

124 հոգի

Յեթե հաշվելու լինենք, թե սրանք մեկ րոպեյում միասին քանի տառ են կարդացել, ապա կստացվեն հետևյալ թվերը՝

| Քանի հոգի | Տողեր և տառերի քանակը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 3,5 կվ. | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. | 5,5 կվ | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
| 62 | 33354 | 36966 | 38829 | 32703 | 34849 | 34243 | 35882 | 32931 |
| 62 | 38945 | 43264 | 39839 | 39019 | 41731 | 40416 | 40598 | 38680 |
| Գումար | 72299 | 80230 | 78668 | 71722 | 76580 | 74659 | 76480 | 71611 |

Զանազան յերկարության տողերով տպված տեքստերը



կարդալիս ամեն մի ընթերցող մեկ րոպեյում կարդացել է՝

| | | Տարբ. | % |
|---|---|---|---|
| 4 կվ.-ից | 647 տառ | — | |
| 4,5 » | 634 » | 13 տառ | 2,0% |
| 5,5 » | 618 » | 29 » | 4,5 » |
| 6,5 » | 617 » | 30 » | 4,6 » |
| 6 » | 602 » | 45 » | 7,0 » |
| 3,5 » | 583 » | 64 » | 9,9 » |
| 5 » | 579 » | 68 » | 10,5 » |
| 7 » | 578 » | 69 » | 10,8 » |

Տողերն ըստ դյուրընթեռնելիության ստորաբաժանվում են այսպես՝

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 4,5 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 6 կվ. | 3,5 կվ. | 5 կվ. | 7 կվ. |

Այս տվյալներից յերևում է, վոր առաջին յենթախմբի բանվորներն ամենից արագ կարդում են 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, սրան հաջորդում է 4,5 կվ. տողերով տեքստը, վորը մեկ րոպեյում քիչ է կարդացվում 2%-ով կամ 13 տառով, տարբերությունը շատ չնչին է, յեթե համեմատելու լինենք մյուս տողերի հետ։ Բավարար են կարդացվում 5,5 և 6,5 կվ. յերկարության տողերով տպված տեքստերը, վորոնք մեկ րոպեյում քիչ են կարդացվում 4 կվ.-ից 29 և 30 տառով (4,5% և 4,6%)։

Հատկապես վատ են կարդացվում 6, 3,5, 5 և 7 կվ. յերկարության տողերով տպված տեքստերը, վո-

րոնք 4 կվ.-ի հետ համեմատած մեկ րոպեյում քիչ են կարդացվում 45—69 տառով, կամ պակաս 7%-ից մինչև 10%։

## Բ. ԵՆԹԱԽՄԲԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ

Կարդալում ավելի հմուտ են այն բանվորները, որոնք մեկ րոպեյում կարդում են 700—800 տառ. այդպես են կարդացել 72 բանվոր։ Այս 72 հոգին միասին զանազան տեքստերից կարդացել են՝

| 3,5 կվ. | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. |
|---|---|---|---|
| 53117 տ. | 56608 տ. | 53836 տ. | 52247 տ. |

| 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
|---|---|---|---|
| 55517 տ. | 52736 տ. | 53471 տ. | 51704 տ. |

Զանազան չերկարության տողերով տպված տեքստերն ըստ դյուրընթեռնելիության դասավորվում են այսպես—մեկ բանվորը մի րոպեյում կարդացել է՝

| | | Տառ. |
|---|---|---|
| 4 կվ.-ով տպվածից | 788 տառ | |
| 5,5 » » | 771 » | 17 տ. |
| 4,5 » » | 748 » | 40 » |
| 6,5 » » | 743 » | 45 » |
| 3,5 » » | 737 » | 51 » |
| 6 » » | 732 » | 56 » |
| 5 » » | 726 » | 62 » |
| 7 » » | 718 » | 70 » |

Այս թվերից երևում է, որ բ. ենթախմբի բանվորներն ամենից լավ կարդացել են 4 կվ. չերկարության տողերով տպված տեքստը. մյուս չերկարության



տողերի համեմատությամբ 4 կվ. չերկարության տեքստը մեկ րոպեյում կարդացվել է ավելի՝

| | | % |
|---|---|---|
| 5,5 կվ.-ով տպվածից | 17 տառով | 2,2 |
| 4,5 » » | 40 » | 5,1 |
| 6,5 » » | 45 » | 5,7 |
| 3,5 » » | 51 » | 6,5 |
| 6 » » | 56 » | 7,1 |
| 5 » » | 62 » | 7,9 |
| 7 » » | 70 » | 8,9 |

Ըստ դյուրընթեռնելիության տողերը դասավորվում են այսպես՝

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 5,5 կվ. | 4,5 կվ. | 6,5 կվ. | 3,5 կվ. | 6 կվ. | 5 կվ. | 7 կվ. |

Մեկ րոպեյում 500—700 և 700—800 տառ կարդացող բոլոր բանվորների կարդացածից ստացված թվերը այժմ միասին ենք հաշվելու, որպեսզի պարզենք, թե գրագետ բանվորներն ընդհանրապես ինչպիսի չերկարություն ունեցող տողերով տպված տեքստերն են լավ կարդում։

| | 3,5 կվ. | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62 | 33354 | 36966 | 38829 | 32703 | 34849 | 34243 | 35882 | 32931 |
| 62 | 38945 | 43264 | 39839 | 39019 | 41731 | 40416 | 40598 | 38680 |
| 72 | 53117 | 56608 | 53836 | 52247 | 55517 | 52736 | 53471 | 51704 |
| 196 | 125416 | 136838 | 132504 | 123969 | 132097 | 127395 | 129951 | 123315 |

Այս թվերից պարզվում ե, որ մի բանվոր մեկ րոպեյում միջին թվով տարբեր տեքստերից կարդացել ե հետևյալ քանակի տառեր՝

| | | Տարբ. |
|---|---|---|
| 4 կվ. յերկարութ. տեքստից | 698 տառ | — |
| 4,5 » » » | 676 » | 22 տ. |
| 5,5 » » » | 674 » | 24 » |
| 6,5 » » » | 663 » | 35 » |
| 6 » » » | 650 » | 48 » |
| 3,5 » » » | 640 » | 58 » |
| 5 » » » | 632 » | 66 » |
| 7 » » » | 629 » | 69 » |

Ամենից լավ կարդացվել ե 4 կվ. յերկարության տեքստը. այս տեքստը մյուսների համեմատությամբ տվել ե մեկ րոպեյում ընթերցած տառերի հետևյալ հավելումը.

4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը ավելի յե կարդացվել՝

| | | % |
|---|---|---|
| 4,5 կվ.-ից | 22 տառով | 3,2 |
| 5,5 » | 24 » | 3,4 |
| 6,5 » | 35 » | 5,0 |
| 6 » | 48 » | 6,9 |
| 3,5 » | 58 » | 8,3 |
| 5 » | 66 » | 9,5 |
| 7 » | 69 » | 9,9 |

Տեքստերն ըստ դյուրընթեռնելիության դասավորվում են այսպես՝

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 4,5 | 5,5 | 6,5 | 6 | 3,5 | 5 | 7 |

Այժմ տեսնենք, թե բոլոր դեպքերում զանազան յերկարության տողերով տպված տեքստերը դյուրընթեռնելիության տեսակետից ինչպես են դասավորվում՝

| Տառերի քանակը | 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 500—700 | 4 կվ. | 4,5 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 6 կվ. | 3,5 կվ. | 5 կվ. | 7 կվ. |
| 700—800 | 4 կվ. | 5,5 կվ. | 4,5 կվ. | 6,5 կվ. | 3,5 կվ. | 6 կվ. | 5 կվ. | 7 կվ. |
| 500—800 | 4 կվ. | 4,5 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 6 կվ. | 3,5 կվ. | 5 կվ. | 7 կվ. |

Պարզ յերևում ե, որ 4 կվ. յերկարության տողերը բանվորները կարդում են հաջող բոլոր դեպքերում. սրան հաջորդում ե 4,5 կվ., ապա 5,5 կվ. և հետո 6,5 կվ. տողերը։

Առանձնապես վատ են կարդացվում 7 կվ. և 5 կվ. յերկարության տողերը. վատ են կարդացվում նաև 3,5 կվ. և 6 կվ. յերկարության տողերը։

Այս տվյալներից յերևում ե, որ 4 կվ. տողը (կարճ) այն սահմանն ե, որից ավելի կարճ տողերը կարդացվում են վատ, իսկ 7 կվ. այն սահմանն ե, որը և որից յերկար տողերը կարդացվում են վատ։ Այլ դեպքերում կազմակերպած փորձերի ժամանակ ևս 7 կվ. յերկարության տողը միշտ ել տվել ե անհաջող արդյունք։

Դյուրընթեռնելիության սահմանները գրագետ բանվորների համար ընկնում ե 4 կվ.—6,5 կվ. յերկարության տողերի մեջ։

Բայց հաջողության կարգն աստիճանաբար չի զարգանում, այլ թռիչքաձև. 4 կվ. և 4,5 կվ. տողերը կար-

դացվում են լավ, 5 կվ. տողը կարդացվում է վատ, 5,5 կվ. տողը բավարար, 6 կվ.-ը վատ և 6.5 կվ.-ը բավարար: Այս տատանումները և դյուրընթեռնելիության վերաճիշյալ տախտակն ի նկատի ունենալով, մասսայական գրքերը պետք է ունենան 4 կվ.-ից ոչ պակաս յեվ 5,5 կվ. ոչ ավելի յերկար տողեր:

II

## ՈՒՍԱՆՈՂ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Բանվորների վրա կատարած փորձերը պարզեցին, թե մասսայական գիրքն ինչպիսի յերկարության տողերով պետք է հրատարակվի: Դպրոցականների համար հրատարակվող գրքերի և դասագրքերի տողերի յերկարության հարցը պարզել ենք անցյալ տարի կատարած ուսումնասիրությամբ: Պակաս հետաքրքրական չե նաև այն հարցը, թե ինչ յերկարության տողերով պետք է հրատարակվեն բարձրորակ ընթերցողների համար հրատարակվող գիտական և այլ բնույթի գրքերը:

Այս խնդիրը պարզելու համար փորձի յենթարկեցինք 336 ուսանող և ուսուցիչ: Ստացված մատերիալի վերջնական մշակման ժամանակ օգտագործվել են միմիայն 303 հոգու ընթերցումից ստացված թվերը:



Այս 303 հոգուց կարդացել են մեկ րոպեյում՝

| | |
|---|---|
| 74 հոգի | 800— 900 տառ |
| 75 » | 900—1000 » |
| 39 » | 1000—1100 » |
| 42 » | 1100—1200 » |
| 23 » | 1200—1300 » |
| 28 » | 1300—1400 » |
| 10 » | 1400—1500 » |
| 12 » | 1500—1600 » |

Մեկ րոպեյում 800 տառից պակաս և 1600 տառից ավելի կարդացողներից ստացված թվերը հաշվի չենք առել, վորովհետև դրանք այս կատեգորիայի համար վոչ բնորոշ ընթերցողներ են: 800 տառից պակաս կարդացել են 21 հոգի, իսկ 1600 տառից ավելի 12:

800 — 1600 տառ կարդացողներին բաժանում ենք յերեք յենթախմբերի՝

ա) 800—1000 տառ կարդացողներ
բ) 1000—1300 » »
գ) 1300—1600 » »

### Ա. ՅԵՆԹԱԽՈՒՄԲ՝ 800—1000 ՏԱՌ

Մեկ րոպեյում 800 — 1000 տառ կարդացողներն իհարկե բարձրորակ գրագետ մարդիկ են, բայց կաղմում են այդ կարգի ընթերցողների առաջին աստիճանը. Նրանց ընթերցանության հմտությունը դեռ չի հասել իր բարձր զարգացմանը:

Այս յենթախմբից մեկ րոպեյում կարդացել են.

| | |
|---|---|
| 74 հոգի | 800— 900 տառ |
| 75 » | 900—1000 » |
| 149 հոգի | |

Սրանք միասին տարբեր տողերով տպված տեքստերից կարդացել են հետևյալ քանակով տառեր.

| Քանի հոգի | 3,5 կվ | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ | 5,5 կվ | 6 կվ | 6,5 կվ | 7 կվ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 74 | 61050 | 65808 | 61768 | 62581 | 65634 | 64631 | 63566 | 62079 |
| 75 | 67492 | 74038 | 68839 | 69908 | 72109 | 69695 | 69790 | 68647 |
| 149 | 128542 | 139846 | 130607 | 132489 | 137743 | 134326 | 133356 | 130726 |

Այս թվերը պարզում են, վոր այս յենթախմբի ամեն մի ընթերցող մեկ րոպեյում տարբեր յերկարության տողերով տպված տեքստերից կարդացել է.

| | |
|---|---|
| 4 կվ.-ից | 939 տառ |
| 5,5 » | 924 » |
| 6 » | 902 » |
| 6,5 » | 895 » |
| 5 » | 889 » |
| 7 » | 877 » |
| 4,5 » | 870 » |
| 3,5 » | 863 » |

Ամենից լավ կարդացվում է 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, վորը մեկ րոպեյում մյուս յերկարության տողերով տպված տեքստերից ավելի յե կարդացվում հետևյալ քանակի տառերով.

| | | |
|---|---|---|
| 5,5 կվ-ից | 15 տառով | 2,6% |
| 6 » | 37 » | 4,0 » |
| 6,5 » | 44 » | 4,7 » |
| 5 » | 50 » | 5,3 » |
| 7 » | 62 » | 6,6 » |
| 4,5 » | 69 » | 7,3 » |
| 3,5 » | 76 » | 8,1 » |



Զանազան յերկարության տողերով տպված տեքստերն ըստ դյուրընթեռնելիության ստորաբաժանվում են այսպես.

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ | 5 կվ. | 7 կվ. | 4,5 կվ. | 3,5 կվ. |

## Բ. ՅԵՆԹԱԽՈՒՄԲ. 1000—1300 ՏԱՌ

Այս յենթախմբի տակ ենք դնում այն բոլոր ընթերցողներին, վորոնք մեկ րոպեյում կարդում են 1000—1300 տառ։

Սրանցից մեկ րոպեյում կարդացել են՝

| | |
|---|---|
| 39 հոգի | 1000—1100 տառ |
| 42 » | 1100—1200 » |
| 23 » | 1200—1300 » |
| 104 հոգի | |

Ամեն մի խումբ կարդացել է տարբեր յերկարության տողերով տպված տեքստերից հետևյալ քանակով տառեր.

| Քանի հոգի | 3,5 կվ | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | 47603 | 49515 | 47419 | 48838 | 48864 | 48312 | 48930 | 46877 |
| 42 | 39312 | 42578 | 39501 | 40791 | 41437 | 40502 | 40909 | 39460 |
| 23 | 27493 | 29019 | 28117 | 28692 | 29388 | 28847 | 28707 | 28738 |
| 104 | 114408 | 121112 | 115037 | 118321 | 119689 | 117661 | 118546 | 115075 |

Բ. ցենթախմբի ամեն մի ընթերցող զանազան յերկարության տողերով տպված տեքստերից կարդացել է մեկ րոպեյում՝

| | |
|---|---|
| 4 կվ.-ից | 1165 տառ |
| 5,5 » | 1151 » |
| 6,5 » | 1140 » |
| 5 » | 1138 » |
| 6 » | 1131 » |
| 7 » | 1107 » |
| 4,5 » | 1106 » |
| 3,5 » | 1100 » |

Ամենից հաջող կարդացվել է 4 կվ. յերկարություն ունեցող տողերով տպված տեքստը, վորը մեկ րոպեյում ավելի յե կարդացվել մյուս յերկարության տողերի համեմատությամբ հետևյալ քանակի տառերով.

| | | |
|---|---|---|
| 5,5 կվ.-ից | 14 տառով | 1,3% |
| 6,5 » | 25 » | 2,2 » |
| 5 » | 27 » | 2,4 » |
| 6 » | 34 » | 3,0 » |
| 7 » | 58 » | 5,0 » |
| 4,5 » | 59 » | 5,1 » |
| 3,5 » | 65 » | 5,7 » |

Տարբեր յերկարության տողերով տպված տեքստերն ըստ դյուրընթեռնելիության ստորաբաժանվում են այսպես.

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 5 կվ. | 6 կվ. | 7 կվ. | 4,5 կվ. | 3,5 կվ. |



## Գ. ՑԵՆԹԱԽՈՒՄԲ. 1300—1600 ՏԱՌ

Այս ցենթախմբի տակ ենք համարում այն ընթերցողներին, վորոնք մեկ րոպեյում կարդում են 1300—1600 տառ:

Այս ցենթախմբից

| | | | |
|---|---|---|---|
| 28 հոգի | կարդում են | | 1300—1400 տառ |
| 10 » | » | » | 1400—1500 » |
| 12 » | » | » | 1500—1600 » |
| 50 հոգի | | | |

Ամեն մի խումբ կարդացել է տարբեր յերկարության տողերով տպված տեքստերից հետևյալ քանակով տառեր.

| Քանի հոգի | 3,5 կվ. | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 35583 | 39167 | 36538 | 3864[illegible] | 38786 | 38229 | 37970 | 37273 |
| 10 | 14356 | 15901 | 14780 | 13432 | 14155 | 14537 | 14527 | 14165 |
| 12 | 18040 | 19044 | 19087 | 19053 | 19413 | 18428 | 18055 | 17516 |
| 50 | 67979 | 74112 | 70405 | 71129 | 72354 | 71194 | 70552 | 68954 |

Այս ցենթախմբի մեկ հոգին մեկ րոպեյում զանազան տեքստերից կարդացել է.

| | |
|---|---|
| 4 կվ.-ից | 1482 տառ |
| 5,5 » | 1447 » |
| 6 » | 1424 » |
| 5 » | 1423 » |
| 6,5 » | 1411 » |
| 4,5 » | 1408 » |
| 7 » | 1379 » |
| 3,5 » | 1356 » |

Վերոհիշյալ տվյալներից յերևում է, վոր ամենից լավ կարդացվել է 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, վորը մյուս տեքստերի համեմատությամբ տվել է մեկ րոպեյում հետևյալ քանակով հավելում.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5,5 կվ.-ից | ավելի | 35 | տառով | 2,3% |
| 6 | » | » 58 | » | 3,9 » |
| 5 | » | » 59 | » | 4,0 » |
| 6,5 | » | » 71 | » | 4,8 » |
| 4,5 | » | » 74 | » | 5,7 » |
| 7 | » | » 103 | » | 6,9 » |
| 3,5 | » | » 126 | » | 8,5 » |

Տեքստերն ըստ դյուրընթեռնելիության ստորաբաժանվում են այսպես.

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 5 կվ. | 6,5 կվ. | 4,5 կվ. | 7 կվ. | 3,5 կվ. |

* * *

Բարձրորակ ընթերցողների այս յերեք յենթախմբերից ստացված մատերիալի համեմատությունը կպարզի մեզ հետաքրքրող մի քանի հարցեր։

Նախ տեսնենք, թե բոլոր յենթախմբերի մոտ տեքստերն ըստ դյուրընթեռնելիության ինչպես են իրար հաջորդում.



Բոլորովին պարզ է, վոր յերեք յենթախմբի ընթերցողների համար էլ ամենից հաջող տողն է 4 կվ. յերկարություն ունեցողը. այդ տողերով տպված տեքստը բոլոր դեպքերում էլ տվել է ամենամեծ էֆեկտը։

| Խմբեր | Տառերի քանակը | 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. | 800—1000 | 4 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 5 կվ. | 7 կվ. | 4,5 կվ. | 3,5 կվ. |
| Բ. | 1000—1800 | 4 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 5 կվ. | 6 կվ. | 7 կվ. | 4,5 կվ. | 3,5 կվ. |
| Գ. | 1800—1600 | 4 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 5 կվ. | 6,5 կվ. | 4,5 կվ. | 7 կվ. | 3,5 կվ. |

Յերեք յենթախմբերի համար յերկրորդ տեղն է բռնում 5,5 կվ. յերկարության տողը։

Բոլոր յենթախմբերի համար ամենից վատ կարդացվող տողերն են 3,5 կվ., 4,5 կվ. և 7 կվ. տողերը, վորոնք բռնում են վերջին յերեք տեղերը։

Միջին տեղերն են բռնում 6 կվ., 6,5 կվ. և 5 կվ. տողերը, վորոնց տեղերը փոփոխվում են զանազան յենթախմբերի մոտ։

Այս տվյալներից յերևում է, վոր բարձրորակ հասուն ընթերցողների համար հանձնարարելի յեն 4 կվ. և 5,5 կվ. տողերը, անթույլատրելի չեն նաև 5 կվ., 6 կվ. և 6 5 կվ. տողերը։ Անկասկած է սակայն, վոր նրանց համար անհանձնարարելի յեն 4 կվ.-ից կարճ և 6,5 կվ.-ից ավելի յերկար տողերը։ Այս սահմանների մեջ յեղած տարբեր յերկարության տողերը նույն արժեքը չունեն։ Այդ միջին [illegible] տատանվում է

Гос. Библиотека ZUUA—Арм. ССР им. А. Мясникяна
24375-59

այսպես. 4 կվ.—շատ լավ, 4,5 կվ.—շատ վատ, 5 կվ.—բավարար, 5.5 կվ.—լավ, 6 կվ.—բավարարից բարձր, 6,5 կվ.—բավարար։

Ասացինք, որ բոլոր յենթախմբերի համար ամենից լավ կարդացվող տողն է 4 կվ. յերկարությունն և այնուհետև 5.5 կվ. յերկարություն ունեցողը։

Բոլոր յենթախմբերի մոտ 4 կվ. և 5,5 կվ. յերկարության տողերը նույն առավելությունը չեն ներկայացնում մյուս տողերի համեմատությամբ. մեկ դեպքում 4 կվ.-ի առավելությունը շատ զգալի չէ, մյուս դեպքերում ավելի քիչ։ Այս խնդիրը կպարզվի այն դեպքում, յեթե իրար հետ համեմատելու լինենք զանազան յենթախմբերի տողերի մեկ րոպեյում կարդացված տառերի քանակի փչությունը լավագույն տողի հետ։

4 կվ. յերկարության տողը կարդալիս Ա., Բ. և Գ. յենթախմբի մեկ հոգին միջին թվով մեկ րոպեյում ավելի չէ կարդացել՝

| Ա. խումբ | | | Բ. խումբ | | | Գ. խումբ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողեր | Քանակ տառ | % | Տողեր | Քանակ տառ | % | Տողեր | Քանակ տառ | % |
| 5,5 | 15 | 2,6 | 5,5 | 14 | 1,3 | 5,5 | 35 | 2,3 |
| 6 | 37 | 4,0 | 6,5 | 25 | 2,2 | 6 | 58 | 3,9 |
| 6,5 | 44 | 4,7 | 5 | 27 | 2,4 | 5 | 59 | 4,0 |
| 5 | 50 | 5,3 | 6 | 34 | 3,0 | 6,5 | 71 | 4,8 |
| 7 | 62 | 6,6 | 7 | 58 | 5,0 | 4,5 | 74 | 5,7 |
| 4,5 | 69 | 7,3 | 4,5 | 59 | 5,1 | 7 | 103 | 6,9 |
| 3,5 | 76 | 8,1 | 3,5 | 65 | 5,7 | 3,5 | 126 | 8,5 |
| | 53,3 | 5,5 | | 40,3 | 3,5 | | 75 | 5,1 |



Յեթե ցանկանանք պարզել, թե ամեն մի խմբի մեջ 4 կվ. յերկարության տեքստը մյուս բոլոր տեքստերի համեմատությամբ մեկ րոպեյում քանի տառի հավելում է տալիս, ապա պետք է հանենք տարբերությունների միջինը, որն է՝

| | Տառեր | % |
|---|---|---|
| Ա. յենթախումբ | 53,8 | 5'5 |
| Բ. » | 40,3 | 3,5 |
| Գ. » | 75 | 5,1 |

Այս թվերից յերևում է, որ Ա. և Գ. յենթախմբերի մոտ 4 կվ. յերկարության տողերի ընդհանուր առավելությունը կազմում է 5,5 տոկ. և 5,1 տոկոս, այսինքն, 4 կվ. յերկարության տողերի դրական նշանակությունը մյուս տողերի համեմատությամբ զգալի չափով մեծ է, այնինչ Բ. յենթախմբի մոտ այդ տարբերությունը մեղմացած է, այսինքն, մյուս տողերով տպված տեքստերն այս յենթախմբի անհատները կարդում են ավելի վատ, քան 4 կվ. յերկարություն ունեցող տեքստը, բայց տարբերությունը շատ մեծ չէ, սրանց մոտ տողերի տարբերությունն այնքան մեծ նշանակություն չունի, ինչպես Ա. և Գ. յենթախմբերի մոտ։

* * *

Մենք բարձրորակ ընթերցողներին բաժանեցինք յերեք յենթախմբերի, որովհետև նրանց կարդալուց ստացված մատերիալն այդ եր պահանջում. մեկ րոպեում 900 և 1600 տառ կարդացողներին չէինք կարող

նույն կատեգորիայի ընթերցողներ համարել։

Հետաքրքրական է, իհարկե, այդ ընթերցողներին յենթախմբերի բաժանելը և նրանց մեջ գոյություն ունեցող նմանությունների ու տարբերությունների հայտնաբերելը, բայց հրատարակչական գործի համար այդ հանգամանքը հատուկ հետաքրքրություն չունի, որովհետև անկարելի յե բարձրորակ ընթերցողների այդ յենթախմբերն ինկատի ունենալով տարբեր ֆորմատի գրքեր հրատարակել կամ նույն գիրքը յերեք տարբեր ֆորմատով հրատարակել այդ յենթախմբերի ընթերցման յուրատեսակությանը հարմարվելու համար։

Պետք է գտնել մի այնպիսի միջին մեծություն, որը բավարարի առհասարակ բարձրորակ ընթերցողներին.

Նախ պարզենք այն հարցը, թե բարձրորակ ընթերցող ասելիս ինչպիսի ընթերցողի նկատի ունենք. այս հարցը պարզելու համար պետք է նախ պարզենք, թե կարդալու հմտությունն ինչպես է զարգանում մեր ընթերցողների մոտ։ Այս հարցը պարզված է մեր նախկին ուսումնասիրություններով։

Այդ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր դպրոցականները միջին թվով մեկ րոպեյում կարդում են.

| Դասարան | Քանի տառ | Հավելում |
|---|---|---|
| 3-րդ | 306 | |
| 4-րդ | 400 | 94 տառ |
| 5-րդ | 630 | 230 » |
| 6-րդ | 765 | 135 » |
| 7-րդ | 829 | 64 » |
| 8-րդ | 1029 | 200 » |
| 9 և 10-րդ | 1030 | 1 » |
| Ուսանող | 1091 | 29 տառ |

Այս թվերը ցույց են տալիս, որ կարդալու հմտությունն ընդհանրապես տարեց-տարի զարգանում է, բայց ոչ հավասար չափերով. մեծ թռիչք է նկատվում 5-րդ դասարանում, ինչպես և 8-րդում։ Բացի այդ, ուսման 8-րդ տարում դպրոցականը համարյա հասնում է իր զարգացման գագաթնակետին։ Հաջորդ դասարաններում և ուսանողական տարիներում անհատը մեկ րոպեյում շահում է միմիայն 30 տառի հավելում։

Բարձրորակ ընթերցողների միջին տիպը կարդում է մեկ րոպեյում մոտ 1100 տառ։ Այս տիպի համար ամենահարմար յերկարության տողը գտնելու համար պետք է հաշվի առնել նրանից մեկ րոպեյում 100 տառով քիչ (900—1000 տ.) և 100 տառ շատ (1100—1200 տ.) կարդացողներին, այսինքն 300 տառի տարբերություն կարդացողներին։

Այդ սահմաններում կարդացել են՝

| | |
|---|---|
| 75 հոգի | 900—1000 տառ |
| 89 » | 1000—1100 » |
| 42 » | 1100—1200 » |
| 156 | |

Սրանք զանազան տեքստերից միասին կարդացել են հետյալ քանակով տառեր.

Աղյուսակը տես հաջորդ էջում։

Տարբեր տեքստերից մեկ րոպեյում կարդացվել է

| | | |
|---|---|---|
| 4 կվ. | 1065 | տառ |
| 5,5 » | 1041 | » |
| 6,5 » | 1023 | » |
| 5 » | 1023 | » |
| » | 1016 | » |
| 4,5 » | 998 | » |
| 7 » | 994 | » |
| 3,5 » | 990 | » |

| Էջի քանակ | Քանի՞ տառ մեջը | 3,5 կվ. | 4 կվ. | 4,5 կվ. | 5 կվ. | 5,5 կվ. | 6 կվ. | 6,5 կվ. | 7 կվ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 900—1000 | 67492 | 74038 | 68839 | 69908 | 72109 | 69695 | 69790 | 68647 |
| 39 | 1000—1100 | 47603 | 49515 | 47419 | 48838 | 48864 | 48312 | 48930 | 46877 |
| 42 | 1100—1200 | 39312 | 42578 | 39501 | 40791 | 41437 | 40502 | 40909 | 39460 |
| 156 | — | 154407 | 166131 | 155759 | 159537 | 162410 | 158509 | 159629 | 154984 |

Ամենից լավ կարդացվել է 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, վորը մյուս տողերի համեմատությամբ մեկ րոպեյում կարդացվել է ավելի հետևյալ քանակի տառերով.

| | | |
|---|---|---|
| 5,5 կվ.-ից | 24 տառով | 2,3% |
| 6,5 » | 32 » | 4,0 » |
| 5 » | 32 » | 4,0 » |
| 6 » | 49 » | 4,6 » |
| 4,5 » | 67 » | 6,3 » |
| 7 » | 71 » | 6,7 » |
| 3,5 » | 75 » | 7,0 » |
| միջինը | 50 տառ | 5,0% |

Տողերն ըստ դյուրընթեռնելիության դասավորվում են այսպես.

| 1 տեղ | 2 տեղ | 3 տեղ | 4 տեղ | 5 տեղ | 6 տեղ | 7 տեղ | 8 տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 կվ. | 5,5 կվ. | 6,5 կվ. | 5 կվ. | 6 կվ. | 4,5 կվ. | 7 կվ. | 3,5 կվ. |



Այս հաշվով ելի ստացվում է այն, վոր ամենից լավ կարդացվում է 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, ապա 5,5 կվ. յերկարության տողերով տեքստը. 5,5 կվ.-ին իրենց արժեքով մոտ են 6,5 կվ. և 5 կվ. յերկարության տողերը։

Միանգամայն անհաջող են կարդացվում 3,5 կվ., 7 և 4,5 կվ. յերկարության տողերը։ 6 կվ. յերկարության տողը բռնում է լավ և վատ կարդացվող տողերի միջինը, բայց և այնպես դա հաջող կարդացվող տող չի կարող համարվել, վորովհետև 4 կվ.-ից մեկ րոպեյում պակաս է կարդացվել 49 տառով։

Սրանով ստացվում է այն, վոր բարձրորակ կարդացողների համար գրքերը պետք է հրատարակվեն 5,5 կվ., 5 կվ. յեվ 6,5 կվ. տողերով։

Մեր այս նոր ուսումնասիրությունը պարզեց, վոր թե բանվորները և թե ուսանողները հաջող կարդում են 4 կվ. յերկարության տողերով տպված տեքստը, դրա պատճառն այն է, վոր այս կատեգորիայի ընթերցողները հաճախ լրագիր են կարդում և նրանց աչքը վարժվել է կարճ տողերը դյուրությամբ կարդալուն։ Հետաքրքրական է այն, վոր նորմալ դպրոցի բոլոր դասարաններում աշակերտները կարճ տողերով տպված տեքստերը վատ են կարդում. Նշանակում է, վոր կարճ տողը մի վորոշ արժեք է ներկայացնում այն ընթերցողների համար, վորոնք լրագիր են կարդում և կարճ տողերով տպված տեքստերի ընթերցանությանը վարժվում։ Բայց և այնպես 4 կվ. յերկարության տողը չենք հանձնարարում բարձրորակ ընթերցողների համար, վորովհետև տպագրական ծախքերն ավելորդ չափով մեծանում են, գրքի ծավալն ավելորդ չափով մեծանում է։

Պետական Գրադարան Гос. Библиотека ՀՍՍՀ—Арм. ССР им. А. Мясникяна

Ավելի ցանկալի յեն միջին յերկարության՝ 5 կվ. և 5,5 կվ. տողերը և միջինից մի փոքր յերկար՝ 6,5 կվ. տողը, վորոնք կարդացվում են իրար շատ նման արագությամբ. մեկ րոպեյում իրարից տարբեր են կարդացվում միմիայն 8 տառով, վորը մի չնչին մեծություն է։ Այս տողերը 4 կվ. տողի համեմատությամբ մեկ րոպեյում քիչ են կարդացվում 24 կամ 32 տառով, վորը նույնպես զգալի մի մեծություն չէ, քանի վոր բարձրորակ ընթերցողները մեկ րոպեյում կարդում են միջին թվով 1100 տառ. 24 և 32 տառը կազմում են այս թվի 2,2% և 2,9%-ները։ Այս չնչին առավելության համար 4 կվ. յերկարության տողին հատուկ արժեք չպետք է տալ, քանի վոր այդ տողով մեծ գրքեր տպագրելու հետ կապված են զգալի անհարմարություններ։

---

**Տեխ. խմբագիր Գ. Ջնեյան**
**Սրբագրիչ Ս. Տահրազյան**

*Պատվ. № 1567, Գլավլիտ № 8736, Հրատ. № 3171, Տիրաժ 500*
*Հանձնված է արտադր. 25 հոկտ. 1934 թ.*
*Ստորագրված է տպելու 27 հունվ. 1935 թ.*

*Պետհրատի տպարան, Յերևան, 2-րդ Գնունի փ., № 4*

ՀՀ Ազգային գրադարան
NL0296119

23.950

ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ

67/1-935

Г. ЭДИЛЯН

УДОБОЧИТАЕМОСТЬ
ТИПОГРАФСКИХ
СТРОК

Гиз ССР Армении, Эривань, 1935